ԴԵՂՈՐԱՅՔԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԾԲԱ-ՄԱ-ԱՊՁԲ-21/1»

ք. Ծաղկաձոր <<27>> հունվար 2021թ.

«Ծաղկաձորի ԲԱ» ՊՓԲ Ընկերությունը, ի դեմս տնօրենի ժ/պ Ա. Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Տարոն ֆարմ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Երեմյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

1.2 Անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայքի (չափաբաժին 7-ը) վաճառողն դեղատնից տրամադրում է բնակչին՝ գնորդի կողմից (հաստատված կլոր կնիքով) տրված դեղատոմսում նշված քանակությամբ՝ 50 տոկոս զեղջով: Ապրանքի ստացման համար բնակիչը պարտավոր է ստորագրել դեղատոմսի հետևի մասում, նշված տեղում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները։

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը։

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից։

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը։

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները։

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը։

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

2.4.12 Ներկայացնել հաշիվ ապրանքագիր, ընդունման համձնման արձանագրություն և ռեեստր (համաձայն ՀՀ ԱՆ 27.01.2005թ-ի N:74 հրամանի) ամեն ամսվա վերջին կամ հաջորդ օրը: Պահպանել դեղատոմսերը հինգ տարի:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **353 437 (երեք հարյուր հիսուներեք հազար չորս հարյուր երեսունյոթ ՀՀ դրամ)** : Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասնօրյա աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում, կնքում և Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված,կնքված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է __13__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Ծաղկաձորի ԲԱ>> ՊՓԲԸ	**<<Տարոն ֆարմ>> ՍՊԸ**
ք. Ծաղկաձոր, Գ. Մագիստրոսի 2	**ք. Հրազդան Կենտրոն 75/25**
բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ	**բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ**
ՀՎՀՀ՝ 03006183	**ՀՎՀՀ՝ 03019786**
ՀՀ՝ 163158101044	**ՀՀ՝ 163158011763**
տնօրեն՝ Ա. Գալստյան	**տնօրեն՝ Գ. Երեմյան**
Digitally signed by GALSTYAN ARTUR 2411780184 Date: 2021.01.27 13:34:53 GMT+04:00	YEREMYAN GEVORG 2909870081 Digitally signed by YEREMYAN GEVORG 2909870081 Date: 2021.01.27 21:30:39 +04'00'
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
<<27>> հունվար 2021 թ. կնքված
N«ԾԲԱ-ՄԱ-ԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի							
Չ/Հ	անվանումը	չ/մ	քանակը	տեխնիկական բնութագիրը	Մատակարարման ժամկետը		
1	Դետրիմեդ կաթ. 15000ՄԵ/մլ 10մլ	հատ	39	խոլեկալցիֆերոլcholecalciferolկաթիլներ ներքին ընդունման15000ՄՄ/մլ,10մլ ապակե շշիկ և կաթոցիկ	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	20	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	19	19.07.2021
2	Կարդիոմագնիլ թ/պ դ/հ 75 մգ № 100	հատ	**800**	ացետիլսալիցիլաթթու, մագնեզիումի հիդրօքսիդ acetylsalicylic acid, magnesium hydroxideդեղահատեր թաղանթապատ75մգ+15,2մգ,բլիստերում	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	200	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	600	19.07.2021
3	Վերոշպիրոն դ/հ 25մգ №20	հատ	**920**	սպիրոնոլակտոնspironolactoneդեղահատեր25մգ, բլիստերում (20/1x20/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	400	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	520	19.07.2021
4	Ֆուրոսեմիդ դ/հ 40մգ №50	Հատ	**950**	ֆուրոսեմիդfurosemideդեղահատեր40մգ,բլիստերում (50/5x10/, 50/2x25/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	500	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	450	19.07.2021
5	Էնալապրիլ դ/հ 10մգ №20	հատ	**500**	էնալապրիլ (էնալապրիլի մալեատ)enalapril (enalapril maleate)դեղահատեր10մգ,բլիստերում (20/2x10/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	300	15.02.2021

					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	200	19.07.2021
6	Կալցիումի գլյուկոնատ դ/ի 0,5գ №10	հատ	**400**	կալցիումի գլյուկոնատcalcium gluconateդեղահատեր500մգ,ստրիպում (10/1x10/), բլիստերում (10/1x10/, 20/2x10/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	200	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	200	19.07.2021
7	Ամոքսիցիլին օշարակ 250մգ/5մլ 100մլ	հատ	**15**	ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ) գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի250մգ/5մլ,40գ գրանուլներ ապակե սրվակում 100մլ	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	5	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	10	19.07.2021
8	Ամոքսիկլավ դ/կախույթ 156,25մգ/5մլ 100մլ	հատ	**19**	ամօքսիցիլին(ամօքսիցիլինի տրիհիդրատ),քլավուլանաթթու(կալիումի քլավուլանատ) դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 125մգ/5մլ+31,25մգ/5մլ, 100մլ ապակե շշիկ նչափիչ գդալ	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	9	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	10	19.07.2021
9	Ցետամոլ մոմիկ 150մգ №10	հատ	**20**	պարացետամոլparacetamolմոմիկներ ուղիղաղիքային150մգ (10/2x5/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	10	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	10	19.07.2021
10	Պարացետամոլ օշարակ 2,4% 60մլ	հատ	**10**	պարացետամոլparacetamolլուծույթ ներքին ընդունման, նարնջի համով120մգ/5մլ, 60մլ և 100մլ ապակե շշիկ	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	3	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	7	19.07.2021
11	Պերուֆեն օշարակ 100մգ/5մլ 100մլ	հատ	**20**	իբուպրոֆեն ibuprofenդեղակախույթ ներքին ընդունման20մգ/մլ, 100մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	10	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	10	19.07.2021
12	Ֆլուկոնազոլ դ/պ	հատ	**24**	ֆլուկոնազոլ fluconazoleդեղապատիճներ50մգ, բլիստերում (12)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը

	50մգ №12				ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	12	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	12	19.07.2021
13	Կապտոպրիլ դ/հ 25մգ №40	հատ	**280**	կապտոպրիլcaptoprilդեղահատեր25մգ, բլիստերում(40/4x10/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	160	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	120	19.07.2021
14	Ասկորբինաթթու գլյուկոզայով դ/հ 0,1գ №10	հատ	**550**	ասկորբինաթթու, գլյուկոզ (գլյուկոզի մոնոհիդրատ)ascorbic acid, glucose (glucose monohydrate)դեղահատեր100մգ + 877մգ,բլիստերում (10)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	300	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	250	19.07.2021
15	Սուլֆապրիմ օշարակ 40/200մգ/100մլ	հատ	**19**	սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմsulfamethoxazole, trimethoprimդեղակախույթ ներքին ընդունման40մգ/մլ+8մգ/մլ,100մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	9	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	10	19.07.2021

16	Ամլոդիպին դ/հ 5մգ №30	հատ	**600**	(ամլոդիպինի բեզիլատ) դեղահատեր 5մգ,բլիստերում (10/1x10/,30/3x10/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	300	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	300	19.07.2021

17	Իբուպրոֆեն դ/հ 0,2գ №50	հատ	**500**	իբուպրոֆենibuprofenդեղահատեր թաղանթապատ 0,2գ, բլիստերում (10/1x10/, (50/5x10/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	300	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	200	19.07.2021
18	Բիսոպրոլոլ դ/հ 10մգ №30	հատ	**300**	բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ)bisoprolol (bisoprolol fumarate)դեղահատեր թաղանթապատ10մգ,բլիստերում (30/3x10/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	150	15.02.2021
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	150	19.07.2021

19	Օմեպրազոլ դ/պ 20մգ №30	հատ	**400**	օմեպրազոլomeprazoleդեղապատիճներ20մգ, բլիստերում (30/3x10/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	400	15.02.2021
20	Զենտել 4% 10մլ	հատ	**6**	ալբենդազոլ 4% 10մլ	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					ք.Ծաղկաձոր Գ. Մագիստրոս 2	6	19.07.2021
21	Սալբուտամոլ ցողացիր 100մկգ/դոզա 200 դոզ *(50% զեղչ դեղատոմսով)*	հատ	**65**	սալբուտամոլ (սալբուտամոլ սուլֆատ) ցողացիր շնչառման, դեղաչափավոր-վածՁ100մկգ/դեղաչափ, 200 դեղաչափ ալյումինե տարա ցողացիր սարքով	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					Պայմ. ուժի մեջ մտնելուց հետո ամսական կտրվածքով տրամադրվում է քաղաքացուն՝ ընկերության կողմից տրված դեղատոմսերով, դեղատան միջոցով	65	մինչև 16.12.2021թ
22	Ատորվաստատին թ/պ դ/հ 20մգ №30 (50% զեղչ դեղատոմսով)	հատ	**330**	ատորվաստատին (ատորվաստատին կալցիում) atorvastatin (atorvastatin calcium)դեղահատեր թաղանթապատ20մգ,բլիստերում (30/3x10/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					Պայմ. ուժի մեջ մտնելուց հետո ամսական կտրվածքով տրամադրվում է քաղաքացուն՝ ընկերության կողմից տրված դեղատոմսերով, դեղատան միջոցով	330	մինչև 16.12.2021թ.
23	Կոնկոր դ/հ 2,5մգ №50 (50% զեղչ դեղատոմսով)	հատ	**330**	բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ) bisoprolol (bisoprolol fumarate)դեղահատեր թաղանթապատ 2,5մգ, բլիստերում (30/3x10/, 30/1x30/, 50/5x10/, 50/2x25/, 90/3x30/)	հասցե	Ենթակա քանակը	ժամկետը
					Պայմ. ուժի մեջ մտնելուց հետո ամսական կտրվածքով տրամադրվում է քաղաքացուն՝ ընկերության կողմից տրված դեղատոմսերով, դեղատան միջոցով	330	մինչև 16.12.2021թ.

*դեղի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝
ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,
բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,
գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:
* քանի որ, «ԾԲԱ-ՄԱ-ԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգում ներառված է 50% զեղչով տրամադրվող դեղորայք (Հ/Բ 21,22,23-ը) , պարտադիր պայման է համարվում մատակարարի գտնվելու վայրը համայնքից 10կմ հեռավորության վրա:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
<<Ծաղկաձորի ԲԱ>> ՊՓԲԸ

ք. Ծաղկաձոր, Գ. Մագիստրոսի 2

բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ

ՀՎՀՀ՝ 03006183

ՀՀ՝ 163158101044

տնօրեն՝ Ա. Գալստյան

Digitally signed by GALSTYAN ARTUR 2411780184
Date: 2021.01.27 13:35:29 GMT+04:00

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<Տարոն ֆարմ>> ՍՊԸ

ք. Հրազդան Կենտրոն 75/25

բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ

ՀՎՀՀ՝ 03019786

ՀՀ՝ 163158011763

տնօրեն՝ Գ. Երեմյան

YEREMYAN GEVORG 2909870081

Digitally signed by YEREMYAN GEVORG 2909870081
Date: 2021.01.27 21:42:35 +04'00'

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
<< 27 >> հունվար 2021 թ. կնքված
N«ԾԲԱ-ՄԱ-ԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		Հունվար	փետրվար	Մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	Օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	խոլեկալցիֆերոլ 10մլ	0	0	0	19500	19500	19500	19500	19500	19500	19500	38025	38025	38025
2	ացետիլսալիցիլաթթու 75մգ N100	0	0	0	5000	5000	5000	5000	5000	5000	5000	20000	20000	20000
3	սպիրոնոլակտոն 25մգ N20	0	0	0	17000	17000	17000	17000	17000	17000	17000	39100	39100	39100
4	ֆուրոսեմիդ 40մգ N50	0	0	0	2500	2500	2500	2500	2500	2500	2500	4750	4750	4750
5	էնալապրիլ 10 մգ N20	0	0	0	2100	2100	2100	2100	2100	2100	2100	3500	3500	3500
6	կալցիումի գլյուկոնատ 0,5գ N10	0	0	0	2000	2000	2000	2000	2000	2000	2000	4000	4000	4000
7	ամօքսիցիլին 250մգ/5մլ 100մլ	0	0	0	4500	4500	4500	4500	4500	4500	4500	13500	13500	13500
8	ամօքսիցիլին+քլավուլանաթթու 156,25 մգ/5մլ 100մլ	0	0	0	8550	8550	8550	8550	8550	8550	8550	18050	18050	18050
9	ցետամոլ մոմիկ 150մգ N10	0	0	0	650	650	650	650	650	650	650	1300	1300	1300
10	պարացետամոլ օշ-ակ 2,4% 60մլ	0	0	0	1050	1050	1050	1050	1050	1050	1050	3500	3500	3500
11	իբուպրոֆեն 100մլ	0	0	0	10000	10000	10000	10000	10000	10000	10000	20000	20000	20000
12	ֆլյուկոնազոլ 50մգ N12	0	0	0	1800	1800	1800	1800	1800	1800	1800	3600	3600	3600
13	կապտոպրիլ 25մգ N40	0	0	0	800	800	800	800	800	800	800	1400	1400	1400
14	ասկորբինաթթու 0,1գ N10	0	0	0	3000	3000	3000	3000	3000	3000	3000	5500	5500	5500
15	սուլֆամեթոքսազոլ + տրիմեթոպրիմ 40/200մգ/100մլ	0	0	0	8802	8802	8802	8802	8802	8802	8802	18582	18582	18582
16	ամլոդիպին 5մգ N30	0	0	0	6300	6300	6300	6300	6300	6300	6300	12600	12600	12600
17	իբուպրոֆեն 0,2գ N50	0	0	0	2100	2100	2100	2100	2100	2100	2100	3500	3500	3500
18	բիսոպրոլոլ 10մգ N30	0	0	0	4800	4800	4800	4800	4800	4800	4800	9600	9600	9600
19	Օմեպրազոլ 20 մգ N30	0	0	0	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
20	ալբենդազոլ 4% 10մլ	0	0	0	12300	12300	12300	12300	12300	12300	12300	12300	12300	12300
21	սալբուտամոլ ցողացիր 100 մկգ/դեղաչափ) *(50% զեղչ դեղատոմսով)*	0	7200	14400	21600	28800	36000	43200	50400	57600	64800	72000	78000	78000
22	ատորվաստատին 20մգ N30 (50% զեղչ դեղատոմսով)	0	1800	3600	5400	7200	9000	10800	12600	14400	16200	18000	19800	19800
23	բիսոպրոլոլ 2,5մգ N30 (50% զեղչ դեղատոմսով)	0	1530	3060	4590	6120	7650	9180	10710	12240	13770	15300	16830	16830

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով։*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Ծաղկաձորի ԲԱ>> ՊՓԲԸ

ք. Ծաղկաձոր, Գ. Մագիստրոսի 2

բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ

ՀՎՀՀ՝ 03006183

ՀՀ՝ 163158101044

տնօրեն՝ Ա. Գալստյան

Digitally signed by GALSTYAN ARTUR 2411780184
Date: 2021.01.27 13:36:21 GMT+04:00

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Տարոն ֆարմ>> ՍՊԸ

ք. Հրազդան Կենտրոն 75/25

բանկ՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ

ՀՎՀՀ՝ 03019786

ՀՀ՝ 163158011763

տնօրեն՝ Գ. Երեմյան

YEREMYAN GEVORG 2909870081

Digitally signed by YEREMYAN GEVORG 2909870081
Date: 2021.01.27 21:43:33 +04'00'

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
«27» հունվար 2021թ. կնքված
N «ԾԲԱ-ՄԱ-ԱՊՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի

Պատվիրատու

Պայմանագրի կողմ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » «հունվար» 2021թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «հունվար» 2021 թ.
Պայմանագրի համարը՝ N«ԾԲԱ-ՄԱ-ԱՊՁԲ-21/1»
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվա-նումը	տեխնի-կական բնութագրի համառոտ շարա-դրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանա-կացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանա-կացույցի	փաս-տացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանա-կացույցի	փաս-տացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
	Կ.Տ.

Հավելված 3.1
«27 » հունվար 2021թ. կնքված
N Ν«ԾԲԱ-ՄԱ-ԱՊՁԲ-21/1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
___
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն